



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՐԱՀԱՆԳԸ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 5-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 17.3-րդ կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 2014 թվականի հունվարի 15-ի թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ի 5.4-րդ կետի պահանջները,

հաշվի առնելով հանրային պաշտպանների առաջարկները,

նկատի ունենալով «Հանրային պաշտպանի գրասենյակ» էլեկտրոնային ծրագրի գործարկմամբ պայմանավորված հանրային պաշտպանի կատարած աշխատանքի առավել մեծ թվով բաղադրիչների ամփոփման հնարավորությունը,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Հաստատել «Հանրային պաշտպանի մասնագիտական պատրաստվածության և աշխատանքի արդյունավետության գնահատման մասին» հրահանգը (1-4 հավելվածներով) նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016թ. սեպտեմբերի 20-ից:

3. Սահմանել, որ մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը՝ առանց մրցույթի անցկացման հանրային պաշտպանների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի մեկամյա ժամկետը երկարաձգելու հարցը ենթակա է լուծման (գնահատման նախապատրաստման և գնահատման գործողությունները պետք է կատարվեն) սույն որոշմամբ հաստատված հրահանգով:

4. ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշմամբ հաստատված հրահանգի և հավելվածների մասին իրազեկել հանրային պաշտպաններին, ինչպես նաև հրապարակել ՀՀ փաստաբանների պալատի կայքում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

19 սեպտեմբերի 2016թ.

թիվ 405-Լ

ք.Երևան